Ontario

Առողջապահության նախարարություն

COVID-19 պատվաստումից հետո

Տարբերակ 2.0 - Մարտի 29, 2021թ

Ի՞նչ սպասեմ առաջիկա մի քանի օրվա ընթացքում:

- Ընդհանուր կողմնակի ազդեցություններն են՝ ներարկման տեղում ցավ, կարմրություն կամ այտուց, հոգնածություն, գլխացավ, մկանային ցավ, դող, հոդացավ և ցածր ջերմություն:
- Լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են: Անհապաղ դիմեք ձեր բժշկին, բուժքրոջը կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք, եթե պատվաստումից հետո երեք օրվա ընթացքում ունենաք հետևյալ անբարենպաստ ռեակցիաներից որևէ մեկը՝ եղնջացան, դեմքի կամ բերանի այտուց, դժվարեցված շնչառություն, գունատություն և լուրջ քնկոտություն, բարձր ջերմություն (40°C-ից բարձր), ցնցումներ կամ նոպաներ, կամ այլ լուրջ ախտանիշներ (օրինակ՝ ծակծկումներ կամ թմրություն):
- AstraZeneca/COVISHIELD պատվաստանյութը կարող է առաջացնել շատ հազվադեպ կողմնակի ազդեցություն, որը հայտնի է որպես Vaccine-Induced Prothrombotic Immune Thrombocytopenia (VIPIT) (Պատվաստանյութով պայմանավորված պրոտոմբոզային իմունային թրոմբոցիտոպենիա, VIPIT): Եթե պատվաստումից հետո ունեք հետևյալ ախտանիշներից որևէ մեկը, անհապաղ դիմեք բժշկական օգնության՝ հևոց, ցավ կրծքավանդակում, ձեռքի կամ ոտքի այտուց կամ սառնություն, որովայնի մշտական ցավ, ուժեղ կամ վատթարացող գլխացավեր կամ աղոտ տեսողություն, բազմաթիվ մանր կապտուկներ, մաշկի տակ կարմիր կամ մանուշակագույն բծեր կամ արյան բշտիկներ:

Պետք է արդյո՞ք շարունակեմ հետևել COVID-19-ի հանրային առողջապահական միջոցառումներին:

- Պատվաստումը COVID-19-ից ձեզ պաշտպանելու լրացուցիչ միջոց է: COVID-19-ի յուրաքանչյուր դեղաչափը ստանալուց հետո շարունակեք հետևել COVID-19-ի միջոցառումներին, ինչպիսիք են՝ դիմակ կրելը, ֆիզիկական հեռավորություն պահպանելը և ձեռքերը լվանալը:
- Վերահսկեք COVID-19-ի ախտանիշների առաջացումը և ստուգվեք, եթե դրանք ի հայտ գան:

Ե՞րբ պետք է վերադառնամ երկրորդ դեղաչափը ստանալու համար:

- Լիովին պաշտպանված լինելու համար ձեզ հարկավոր է պատվաստանյութի երկու դեղաչափ: Եթե սա ձեր COVID-19-ի առաջին դեղաչափն է, անպայման ստացեք երկրորդը՝ համաձայն կլինիկայի կամ գրանցման համակարգի ցուցումների: Երկրորդ ժամադրությանը բերեք պատվաստման տպված անդորրագիրը, որը ձեզ այսօր են տվել: